

ԳՐԱԽԱՆԱՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀՍՅ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Նրանի պետական համալսարանի հրատարակչությունը հրատարակել է իրավագետ Ա. Թ. Թովմասյանի «Հին և միջնադարյան հայ բրեական իրավունք» մենագրությունը:

Հայ իրավունքի պատմության ու տեսության հարցերը, համեմատած մշակույթի մյուս բնագավառների հետ, քիչ են լուսարանված: Ավելին, հայ իրավունքի և իրավագիտական մտքի պատմության բազմակողմանի ուսումնասիրության բնագավառը դեռ շարունակում է մնալ խուսափանալի տեղիք ունեցող, որովհետև պատկանում են Վ. Իսախանյանի, Ֆ. Բիշոֆի, Ղ. Ալիշանի, Հ. Կարասի, Խ. Սամվելյանի, Ն. Մելիք-Բանդյանի, Ա. Մխիթարյանի, Ա. Զամինյանի, Ն. Ազունցի, Ա. Ղևոնդյանի և ուրիշների շնորհիվ, ապա սովետական շրջանում այդ հարցին, բացի Խ. Սամվելյանի «Հին հայ իրավունքի պատմություն» աշխատությունից, այն էլ գործառնաբար միայն առաջին հատորը, և Ա. Սոփիասյանի ուսերեն լեզվով հրատարակված հայտնի մենագրությունից, պահանջվող խորությամբ բնական և անհրազարձելի (Բ. Հարությունյան, Ա. Պապուկյան, Ս. Արևատյան, Ա. Գալստյան և ուրիշներ): Իսկ եթե վերցնենք հին և միջնադարյան հայ բրեական իրավունքի հարցերը, ապա դրանց նվիրված ոչ մի ուսումնասիրություն մինչև այժմ հրապարակի վրա չի եկել: Հայ իրավագետներից ոչ մեկը թե՛ անցյալում և թե՛ սովետական շրջանում այդ կարևոր խնդրին չի անհրազարձել: Այս տեսակետից Ա. Թ. Թովմասյանի մենագրությունը սուսաբան հաջողված դործն է, որ զալիս է լրացնելու նկատվող ակնբախ բացը:

Գրախոսվող աշխատությունը բաղկացած է առաջարանից (էջ 7—11), ներածությունից (էջ 11—31) և երեք հիմնական ու ծավալուն բաժիններից. «Հին և միջնադարյան հայ բրեական իրավունքի աղբյուրներ» (էջ 32—216), «Հանցագործությունը և հանցագործը» (էջ 225—374), «Պատիժը և գրա կիրառումը» (էջ 404—636): Յուրաքանչյուր բաժին իր հերթին բաժանվում է առանձին գլուխների ու պարագրաֆների, որ և հետևաբար իրենց է տալիս ավելի բազմակողմանի ու հանգամանորեն ծանոթանալու հայ իրավունքի պատմության այդ բնագավառին: Դրան օգնում է նաև գրքի վերջում բերված այբուբենական-առարկայական ցանկը: Հեղինակն ամենուրեք բարեխղճությամբ օգտագործել է ոչ միայն լուսին և ուսերեն լեզուներով գրված բազմաթիվ աշխատություններ, հայ համապատասխան օրենսդրական-իրավաբանական հուշարձաններ, այլև լատներեն գիմել էլ հայ մատենագրությանը: Նրա ուղղորդությունից չի վրդիպել անգամ Մեսրոպ Մաշտոցին վերագրվող «Հաճախապատումը», որի մեջ նկատվում իրավաբանական նյութերին մինչև հիմա ոչ որ չի անհրազարձել: Մենագրության վերջում հեղինակը ուսերեն և գերմաներեն լեզուներով տվել է իր գրքի բովանդակության հակիրճ ամփոփումը, որով ուսանողներին հնարավորություն է տրվում ծանոթանալու կատարված ուսումնասիրության արդյունքներին:

Ա. Թ. Թովմասյանը գրախոսվող մենագրության մեջ տալիս է հին և միջնադարյան հայ բրեական իրավունքի աղբյուրների տեսությունը և այդ իրավունքի բնահանուր մասի ինստիտուտների, սկզբունքների ու հասկացությունների գիտական շարադրանքը և վերլուծությունը:

Աղբյուրների տեսությանը նվիրված բաժինը մեր խորին համոզմամբ ամենից հաջողված բաժիններից մեկն է: Այդտեղ Ա. Թ. Թովմասյանը հանգամանորեն և գիտական պահանջվող խորությամբ ուսումնասիրում է այնպիսի հարցեր, որոնց նշանակությունը դուրս է գալիս ուսումնասիրվող նյութի շրջանակներից: Բաժնում ամփոփված նյութերը մեծ նշանակություն ունեն հին և միջնադարյան հայ իրավունքի և հայոց պատմության համար բնահանրապես: Դրանց նշա-

1 Ա. Թ. Թովմասյան, Հին և միջնադարյան հայ բրեական իրավունք (աղբյուրների տեսություն, հանցագործություն, պատիժ), Համալսարանի հրատարակչություն, 1963, էջ 649:

նակությունը անժխտելի է նաև հայ պետական-իրավական մտքի պատմության ու տեսության համար:

Բացահայտելով հայ բրեական իրավունքի դասակարգային էությունը, հեղինակն այնուհետև, աշխատության հետևյալ բաժիններում հանդամանորեն կանդ է առնում հանցագործության որպես դասակարգային-հասարակական երևույթի վրա, շույց է տալիս դրա պատմականորեն-փոփոխուն լինելը հայ իրականության պայմաններում, վերլուծում է հանցակազմի տարրերը, արարքի վտանգավորությունն ու պատժելիությունը բացառող հանգամանքները, ինչպիսիք են անհրաժեշտ պաշտպանությունն ու ծայրահեղ անհրաժեշտությունը, հեղինակը, բացի այդ, համոզեցուցիչ կերպով հիմնավորում է, որ հայ բրեական օրենքների համաձայն, մարդու դատական-իրավական պատասխանատվության հիմքում, որպես կանոն, գրվել է մեղքի սկզբունքը, որ այդ իրավունքին հայտնի են եղել մեղքի երեք ձևերը՝ գիտավորությունը, անզգուշությունը և խառը մեղքը: Թույլատրվել է նաև օրյեկտիվ մեղսագնացում: Սկզբունքորեն ճիշտ և խիստ հետաքրքիր են հեղինակի փաստարկումներն այն մասին, որ հին և միջնադարյան հայ օրենքներին ծանոթ են եղել այնպիսի բարդ, կարելի է ասել ժամանակակից հասկացություններ, ինչպիսիք են անմեղսականությունը, մեղսակցությունը, հանցակցությունը, հանցափորձը, առնչակցությունը և այլն:

Աշխատության մեջ մի ստվար բաժին, ինչպես նշեցինք վերևում, նվիրված է պատժին ու դրա կիրառման հարցերին: Այստեղ շույց է տրվում, որ պատիժը իրեն դասակարգային-պետական հարկադրանքի ձև առաջացել է պատմական այն շրջանում, երբ հայ հողի վրա կազմավորվել են անտազոնիստական սոցիալական խմբավորումներ, այսինքն թշնամական դասակարգեր և դասեր: Հարցը այսպես դնելով, Ա. Թ. Թովմասյանը ղեկավարվելով գիտական մարքսիստական մեթոդով, այնուհետև սխտեմավորում ու լուսարանում է հայ հին և միջնադարյան օրենքներով նախատեսված ու կիրառվող պատժաձևերը՝ մահապատիժը, մարմնական պատիժները, ազատությունից զրկող կամ այն սահմանափակող պատիժները, գույքային, եկեղեցական-կրոնական բնույթի պատիժները և այլն: Հատուկ դուրս է նվիրված ներման ինստիտուտին ըստ ին և միջնադարյան հայ բրեական իրավունքի:

Այս բոլոր հարցերի համապարփակ շարադրությունը և ճիշտ վերլուծությունը անվիճելի կերպով խոսում են մենագրության գրական կողմերի, նրա արժանիքների մասին, հեղինակի բարձր էրուդիցիայի ու խորը գիտելիքների մասին:

Մենագրության առավելություններից է նաև այն, որ հեղինակը կարողացել է իր ձեռքի տակ եղած բազմաժանր, բազմաբովանդակ իրավաբանական նյութերի տեսությունը շարադրել ճիշտ մեթոդոլոգիայով, միաժամանակ հարազատ մնալով ժամանակի ոգուն և առանց որևէ տուրք տալու մոդերնիզմի սեպկցիոն տեսությանը:

Ա. Թ. Թովմասյանի հետազոտության դրական կողմերից մեկն էլ այն է, որ նա իր աշխատության մեջ բրեական-իրավական նորմերի էությունը, դրանց տեսությունը, կարողացել է բրեական առնել և գիտական խորը ընդհանրացման ենթարկել ոչ թե դոգմատիկ ձևով, ինչպես այդ արել են հայ իրավունքի պատմության հարցերով զբաղված շատ մասնագետներ, այլ այդ իրավական նորմերը նա սխտեմավորել ու դրանց էությունը գիտականորեն շարադրել է կապված օրենսդրական-իրավական հուշարձանների ու իրավանորմերի առաջացման տնտեսական և հասարակական-քաղաքական իրադրության ու պայմանների հետ: Աշխատության մեջ կարմիր թելի նման անց է կացված մարքսիստական այն ճիշտ դրույթը, որ իրավունքն ինքնուրույն, տնտեսական և հասարակական-քաղաքական իրադրություններից կտրված սեփական պատմություն չունի, որ իրավունքի պատմությունը սերտորեն և ամուր թելերով կապված է այն դասակարգային հասարակության բուն պատմության հետ, որի կարիքների համար, պատմական անհրաժեշտության բերումով, այդ նույն իրավունքը կյանքի է կոչվում:

Մենք հավանություն չունենք բաղձակողմանի քննարկման ենթարկելու այդ մենագրությունը, որը լինելով հեղինակի տարիների տրեղան աշխատանքի արդյունքը, սովետահայ իրավագիտական մտքի անվերապահ նվաճումն է, ցանկանում ենք խոսել միայն հայ իրավունքի տեսության մի քանի այնպիսի հարցերի լուսարանման մասին, որոնք, մեր կարծիքով, առանձին ատվերոտ կողմեր ունեն:

Համոռոտակի խոսելով հին հույների, հռոմեացիների, սլավոնների, գերմանացիների, ինչպես նաև եվրոպական մյուս ժողովուրդների մեջ կիրառվող սովորութային իրավունքի մասին, հեղինակն այն կարծիքն է հայտնում, թե ընդհանրապես ժողովուրդները չեն ունեցել իրենց հատուկ սովորութային իրավասիստեմ և իրավունքի հատուկ սկզբունքներն ու հասկացություններն: Միաժամանակ կլինի կարծել, — գրում է հեղինակը, — թե պատմության թատերարենմ իշած

ամեն մի ժողովուրդ ունեցել է սովորութային այսպիսի մի իրավունք, որի նորմերը արմատապես տարբերվել են հարևան մյուս ժողովուրդների սովորութային իրավունքի նորմերից և հատուկ են եղել լացառապես այդ ժողովրդին» (էջ 41), և եզրակացնում է, թե «միայն տվյալ կոնկրետ ժողովրդին հատուկ սովորութային իրավունք փաստորեն գոյություն ունեցել» (նույն տեղը)։ Հեղինակի այս տեսակետի հետ չի կարելի համաձայնվել։

Մեր կարծիքով, ճիշտ հսկասակը, ամեն մի ժողովուրդ ունեցել է սովորութային իր իրավունքը և ժամանակի ընթացքում պահպանել է իր առանձնահատկությունները։ Մեր ասածը հիմնավորելու համար բերենք մի երկու օրինակ։ Ուշադրության են արժանի Հուստինիանոս կայսեր հրամաններն իրեն ենթակա ժողովուրդների կենցաղից սովորութային օրենքները վերացնելու մասին։ Նրա թողած նովելների 73-րդ գլխում ասվում է, թե հայերի մոտ պահպանվում են «բարբարոսական դժան» օրենքներ»։ Նա այդ համարում է անհանդուրժելի և հրամայում է վերացնել դրանց։ Դեռ դրանից առաջ, 354 թ. Ալուիշատի ժողովում որոշում ընդունվեց վերացնել այն «բարբարոսական օրենքները, որոնք արմատացած էին հայ ժողովրդի մեջ»։ «Եվ վերայ մեռելոցն դուրծնին ոճիր ըստ հեթանոսական սովորութեան»։—գրում է հորենացին։ Մեր օրերում անգամ բազմաթիվ ցեղերի մեջ պահպանվել են այնպիսի կենցաղա-իրավական առանձնահատկություններ ու իրավական սովորություններ, որոնք հատուկ են միայն այդ ժողովրդին։ Հետևապես չի կարելի ժխտել տվյալ ժողովուրդներին հատուկ սովորութային օրենքների առկայությունն ու նրանց առանձնահատկությունները։

Գրախոսվող աշխատության դրական կողմերից է և այն, որ հեղինակը մեծ թվով նյութեր է հավաքել վիժագիր արձանագրություններից, որով ավելի է բարձրանում մենագրության արժեքը։ Սակայն համաձայն չենք հեղինակի այն կարծիքին, թե վիժական արձանագրությունները «իրավարանական ուժ ունեցող փաստաթղթեր չեն» (էջ 218)։ Գոյություն ունեն բազմաթիվ վիժական (կամ վիժագիր) արձանագրություններ, որոնք պարտադիր են եղել բոլոր մարդկանց համար, որպես իրավական նորմեր, իսկ դրանց խախտողները ենթարկվել են անգամ քրեական ամենախիստ պատասխանատվության։ Այդպիսի վիժագիր արձանագրություններից կարելի է հիշատակել Հուլավյանների տիրապետության շրջանում Զաքարյան Աղբուղայի 1304 թ. Անի քաղաքում թողած արձանագրությունը։ Կամ՝ Մանուկի մզկիթի պատին փորագրված Աբու-Սեիդի 1335 թ. պարսկերեն մեզ հասած արձանագրությունը, որն իրավական ուժ ուներ ոչ միայն հայ, այլև բոլոր այն ժողովուրդների համար, որոնք մտնում էին Հուլավյանների կայսրության կազմի մեջ։ Դրան չենթարկվողները քրեական պատասխանատվության էին կանչվում։ Նման փաստաթղթերի թիվը կարելի է բազմապատկել։

«Ազգային դատաստանագրերը» գլխում հատուկ պարագրաֆ է նվիրվել Սմբատ Սպարապետի Դատաստանագրերի վերլուծությանն ու բնութագրմանը։ Կրկնելով Վ. Բաստամյանցի, Ղ. Ալիշանի, Խ. Սամվելյանի, Մ. Արեղյանի և ուրիշների կարծիքները, հեղինակը գալիս է այն եզրակացության, որ Սմբատի Դատաստանագրերը թարգմանություն է նա գրում է, «Մնում է ենթադրել, որ (Սմբատի կողմից Ա. Գ.) թարգմանվել է Մխիթար Գոշի Դատաստանագրերը» (էջ 157)։ Որպես կռվան բերվում են երկու դատաստանագրերի հոդվածների խիստ նմանությունները։ Մի ուրիշ տեղ հեղինակն ուղղակի նշում է, «Սմբատ Սպարապետի և Մխիթար Գոշի դատաստանագրերի բովանդակությունը հիմնականում նույնն է» (էջ 159)։ Սակայն բանն այն է, որ հենց ինքը՝ հեղինակը, իր գրքում բազմիցս շեշտում է այդ երկու դատաստանագրերի ինքնուրույն գոյությունը և նրանց առանձնահատկությունները։ Այսպես, գրքի 341 էջում նա գրում է. «Սմբատ Սպարապետի Դատաստանագրերը մի օղակ էր այն ձևարարկումների շղթայում, որոնցով այդ խոշոր պետական դործին ու քաղաքական մտածող հետապնդում էր Կիլիկյան հայկական թագավորության հետագա հզորացմանն ու ամրապնդմանն ապաստակը, հայ ֆեոդալների նկատմամբ կենտրոնախույս ձգտումները սանձահարելու և կենտրոնական պետական իշխանությունը, առանձնապես երկրի գլխավոր ուժերը, ավելի ու ավելի հզորացնելու նպատակը»։

Ավելին, հեղինակն իրավաբանական գտնում է, որ հին հայ սովորութային իրավունքն աղբյուր է հանդիսացել «Կիլիկիայում լույս տեսած Սմբատ Սպարապետի Դատաստանագրերի համար» (էջ 43)։ Մի այլ տեղում նա ուղղակի մատնանշում է, թե Սմբատն իր «Դատաստանագրերը կազմեց հիմք ընդունելով և բազմապիսի օգտագործելով նախ և առաջ հայկական օրենքները» (էջ 135)։ Խոսելով երկու դատաստանագրերի առանձնահատկությունների մասին, հեղինակը պնդում է, որ Սմբատի Դատաստանագրերում «ավելի ամբողջական և շեշտակի գծերով է հորինված ֆեոդալական իրավունքը» (էջ 155), մի ուրիշ տեղ նշում է, որ Սմբատի «Դատաստանագրերն իր տեխնիկական-իրավաբանական կառուցվածքով ավելի կատարյալ է, նրա մեջ թև է զարկել, այնուհանդերձ նկատվում է իրավանորմերի որոշ դասակարգում, մի բան, որ Գոշի Դա-

տատանագրում պարզապես բացակայում է» (էջ 156)։ Ինչպես տեսնում ենք, հեղինակը բազմաթիվ տեղերում շեշտում է Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի և ինքնուրույնությունը և տառապնությունը Գոշի Դատաստանագրքի նկատմամբ։ Մխիթար Գոշի Դատաստանագրքում կան ըզմաթիվ հոգվածներ, որոնք բացակայում են Սմբատի Դատաստանագրքում։ Այդ հոգվածների առկայությունը համոզում են երկու դատաստանագրքերի ինքնատիպությունն ու ինքնուրույնությունը։ Սմբատ Սպարապետը նույնպես ըզմաթիվ հոգվածներ ունի, որոնք բացակայում են Գոշի Դատաստանագրքում։ Լեյս բոլորն ասում են, որ Սմբատ Սպարապետը ինքնուրույն մեծություն է։ Մխիթար Գոշից անկախ մի նոր դատաստանագրքի հեղինակ։ Այդ երկու հեղինակներից յուրաքանչյուրն իր ժամանակաշրջանի և իր միջավայրի արգասիքն է։ Ինչ վերաբերում է Սմբատի կողմից Գոշի Դատաստանագրքից օգտվելու հարցին, ապա այդ ոչ ոք չի ժխտում։ Սակայն օգտվելը մի բան է, «թարգմանելու» բովանդակին այլ բան։

Գրախոսող ուսումնասիրությունն մեջ կան նաև այլ կտրգի անձնություններն ու մեղանշումներ։ Օրինակ, Կիլիկյան հայկական թագավորությունը կործանվել է ոչ թե 1365 թ., ինչպես նշված է գրքում (էջ 150), այլ 1375 թ.։ Աշտիշատի ժողովրդ տեղի է ունեցել ոչ թե 365 թ., ինչպես նշում է հեղինակը (էջ 73), այլ 354 թ.։ Սմբատ Սպարապետն իր Դատաստանագրքը կազմել է ոչ թե «Ռուբինյան թագավորության ծաղկման շրջանում» (էջ 153), այլ շեթումյանների թագավորության ժամանակաշրջանում, քանի որ Ռուբինյանների հայ ղեկավարության կործանվել է 1220 թ., իսկ Սմբատն իր Դատաստանագրքը կազմել է 1265 թ.։ Աշխատության մեջ պատմագիր Մովսես Կաղանկատվացու «Պատմություն Աղուանից» գրքի ստեղծման ժամանակաշրջանը հույս է ցույց տրված։ Մովսես Կաղանկատվացուն հեղինակը դուրս է բերել որպես XVIII դարի հեղինակ։ Կան այլ կտրգի առանձին մեղանշումներ ևս։

Մեր այս գիտողությունները ամենևին էլ չեն կարող ստվեր ձգել Ա. Թ. Թովմասյանի արևելապետ աշխատության վրա։ Այդ աշխատությունը որակ կազմող թերություններ չունի։ Այն հաջողված գործ է և արժանի է բարձր գնահատականի։ Այդ մենագրությունը, նորից կրկենք, սովետահայ իրավաբանության մտքի լավագույն հուշարձաններից մեկն է։

Անկեղծորեն ցանկանում ենք, որ հնարավորին չափ արագ կերպով լույս ընծայվի աշխատության նաև երկրորդ հատորը։ Որի դրություն մասին հեղինակն ավանդել է իր աշխատության մեջ։

Ա. ԳԱՍՏԱՆՆԻ